

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS
Armenian Monthly

ISSN 1682-5446



شماره ۱۷۶ اسفند ماه ۱۳۹۱ No 176, February 2013 ۲۰۱۳ թ. 176 հունվար #

Այս համարում

Հայերեն բաժին

1- Իրանահայ Համայնք.....	1
2- Հայաստան.....	1
3- Արցախ.....	5
4- Արեւմտյան Հայաստան.....	6
5- Միջազգային.....	7
6- Հասարակական.....	9
7- Մշակույթ	14
8- Ծերջին լուրեր.....	19
9- Խոհեր.....	20
10- Գծանկարչություն.....	20
11- Հայերեն-պարսկերեն առածանի.....	20

Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-4
----------------	-----



Ճապիկի առաջին էջում՝ Շուշիի ազատագրման հերոս Գեներալ Արկադի Տեր Թադեոսյան՝ Կոմանդոս

Վերջին էջում՝ Բյանարայի տոհմածառ (Մ. Մարտիրոսյան)

Համար 176, Փետրվար 2013 թ.

No. 176, February 2013

ماهنامه لویس - شماره ۱۷۶ اسفند ماه ۱۳۹۱

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

«Հայրենիքը չեն սիրում օրվա

ռեժիմի համար»

1988թ.-ի փետրվարի 20-ին Երևանում՝ ներկայիս Ազատության, այն ժամանակ՝ Թատերական հրապարակում, տեղի ունեցավ «Միացում» կարգախոսով առաջին ցույցը:

Արցախյան ազատամարտի մահապարտների ջոկատի մարտիկ, «Կարին» ազգագրական երգի ու պարի համույթի գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանի կարծիքով դարաբաղյան շարժումը նպաստեց Հայաստանի անկախացմանը՝ հիշելով ՀՀ ազգային հերոս Մովսես Գորգիսյանի մայիսի 28-ի ելույթը:

«Արցախյան շարժումն Արցախում սկսվել է փետրվարի տասներեքին, իսկ Հայաստանում արձագանքը գտավ փետրվարի 20-ին, մինչ այդ եղել են ընդվզումներ: Արցախի ժողովուրդը մեկ մարդու նման ոտքի էր կանգնել, պետականության մասին խոսել չէր կարելի, քանի որ Հայաստանն անկախ պետականություն չուներ: Մենք առաջին անգամ տեսանք եռագույնը: Մարդիկ կային, ովքեր երկար ժամանակ բողոքում էին անկախություն ուզողներից: Այդ բողոքողների դեմ կանգնողներ եղան, ովքեր ասացին՝ պետք է պայքարել ու անկախություն նվաճել: Լեռնիդ Ազգալոյանը և նրա գործընկեր գիտնականներն արագ հասկացան, որ այս պայքարը զինված պայքարի է վերածվելու և սկսեցին զենքեր «արտադրել»,- ասաց Գինոսյանը:

Հարցին՝ արդյոք հիմա կա՞ նույն մարտական ոգին, պատերազմի վերսկսման դեպքում նմանօրինակ ոգևորություն սպասե՞լ, Գինոսյանն արձագանքեց. «Հայրենիքը չեն սիրում օրվա ռեժիմի համար կամ թելադրանքով: Իրական կոպողն անում են այն, ինչ հայրենիքն իրենից պահանջում է այդ պահին: Երբ պատերազմն ավարտվեց իմ հրամանատար՝ կրտսեր Թամանյանին բարձր պաշտոն առաջարկեցին պաշտպանական գերատեսչությունում, բայց նա հրաժարվեց՝ ասելով, որ պատերազմում կռվեց, իսկ հիմա՝ գիտությանը պետք է վերադառնալ: Ես ինքս՝ 50 «մեռած» պար փրկելով, ընդ որում՝ 15-ը ռազմական, ավելի մեծ գործ եմ անում, քան, եթե...»:

Արցախյան հակամարտությանն ու պատերազմի վերսկսման խնդրին անդրադառնալով, «Կարին»-ի գեղարվեստական ղեկավարը նախ հիշեցրեց Նժդեհի խոսքերը՝ եղիր այնքան ուժեղ, որ թշնամիդ չհանդգնի հարձակվել, այնուհետ՝ նկատեց, թե չպետք է «առաջ թողնել» զգացմունքներին, այլ՝ մտածել սահմաններն անխոցելի դարձնելու մասին: Իհարկե, սա լիովին հնարավոր չէ, քանի որ հայկական լեռնաշխարհի որոշ տարածքներ դեռ թշնամու ձեռքում է:

Իրանահայ Համայնք

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ - Ս. Սարգիս զորավարի տունը՝ Քուրքիա գիւղի Ս. Սարգիս եկեղեցում

Չորեքշաբթի, 30 Յունիս 2013



Թաւրիզ, ազգային առաջնորդարան - Ուրմիայից 15 կմ. հեռավորութեան վրայ գտնուող Քուրքիա գիւղում 17-րդ դարից մնացած Ս. Սարգիս եկեղեցին այցելելով Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր ծ. վրդ. Չիֆթճեանն աղօթք բարձրացրեց առ Աստուծո՛ր երիտասարդութեան սիրելի սուրբի՝ Ս. Սարգիս զորավարի տանի առիթով:

Վերոյիշեալ եկեղեցին ընդարձակ հողատարածք է ունեցել անցեալում, իսկ ներկայում, կողքի հարեւանների կողմից ամփոփուելով, մնացել է միայն ինքը՝ 5x5 տարածքով փոքր մի մատուռ:



Կիսաւեր եկեղեցին 1970-ական թւականներին վերանորոգւել է հայ եւ ասորի համայնքների միասնական ճիգով: Տանիքը փայտաշէն է եւ թիթեղածածկ: Հիւսիսային եւ հարաւային պատերի վրայ գտնուող երկու պատուհաններից բացի՝ հարաւային պատի վրայ կան նախկին կառոյցից մնացած երկու այլ պատուհանների մնացորդները: Աղիւսաշէն կառոյցի մի մասը հնութիւն է, որն ընդհանուր շէնքի քառորդն է միայն: Իսկ նոր հիւսւած մասը ընդհանուր կառոյցի մեծ մասն է: Մուտքի դռան դիմաց երկու կոճղերի վրայ յենւած ծածկ կայ, անձրեւից պաշտպանելու համար մայր դռաը: Ներսում խորան եւ բեմ գոյութիւն չունեն: Եկեղեցին օգտագործուում է վերոյիշեալ երկու համայնքների կողմից՝ այցելու ուխտաւորներին ծառայելով որպէս երեխաների կրօնական

դաստիարակութեան դասարան: Ս. Սարգիս եկեղեցուց թեմակալ առաջնորդն իր ընկերակիցներով այցելեց Քուրքիայի հարեւանութեամբ գտնուող Թումաթուր գիւղի հայոց գերեզմանատունը, որի տապանաքարերի մի մասը կողք քաշելով՝ մեջտեղի մասը գիւղացիները իրենց երեխաների համար վալիբոլի մարզադաշտի են վերածել... Նման կալածների պահպանութեան գծով ազգային իշխանութիւնը յատուկ միջոցառումների դիմել է արդէն՝ պետական համապատասխան հիմնարկների հետ համագործակցաբար:

Հայաստան



ԿԸՀ անդամները ստորագրել են նախագահական ընտրությունների նախնական արդյունքների արձանագրությունը



Փետրվար 19, 2013 | 11:12

Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներն, այսօր՝ փետրվարի 19-ին ստորագրվել է փետրվարի 18-ին տեղի ունեցած նախագահական ընտրությունների նախնական արդյունքների արձանագրությունը:

Նախնական տվյալներով՝ բոլոր 1988 ընտրական տեղամասերում քվեաթերթիկների հաշվարկի արդյունքում, երկրի գործող նախագահ Սերժ Սարգսյանը

հավաքել է 861 378 ձայն կամ 58,64 տոկոս, Բաֆֆի Հովհաննիսյանը՝ 539 674 ձայն կամ 36,74 տոկոս, Հրանտ Բագրատյանը՝ 316 43 ձայն կամ 2,15 տոկոս, Պարույր Հայրիկյանը՝ 18 093 ձայն կամ 1,23 տոկոս, Անդրիաս Ղուկասյանը՝ 8328 ձայն կամ 0,57 տոկոս, Արման Մելիքյանը՝ 3520 ձայն կամ 0,24 տոկոս եւ Վարդան Մեղրակյանը՝ 6 203 ձայն կամ 0,42 տոկոս:

ԿԸՀ-ի տվյալների համաձայն՝ ընտրություններին ընտրողների թիվը կազմել է 2 մլն 529 հազար 016 մարդ, որոնցից ընտրություններին մասնակցել է 1 մլն 521 հազար 931 մարդ կամ ընտրողների 61,18 տոկոսը:

Տարածքային ընտրական հանձնաժողովներին տրվել է 2 մլն 579 հազար քվեաթերթիկ, մարվել է 1 մլն 52 հազար 269 քվեաթերթիկ, անվավեր է 50 հազար 992 քվեաթերթիկ:

Արդուլլահ Գյուլը շնորհավորել է Մերժ Սարգսյանին

Փետրվար 21, 2013 | 13:17

Թուրքիայի նախագահ Արդուլլահ Գյուլը Հայաստանի նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ շնորհավորել է Մերժ Սարգսյանին:

Ինչպես տեղեկացնում է թուրքական «Անադոլու» գործակալությունը, Թուրքիայի նախագահի աշխատակազմից հայտնել են, որ Թուրքիայի նախագահ Արդուլլահ Գյուլը շնորհավորական ուղերձ է հղել Մերժ Սարգսյանին:

ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը վերընտրվելու կապակցությամբ շնորհավորանքներ է ստանում

22/02/2013

ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանին վերընտրվելու կապակցությամբ, ի թիվս մի շարք երկրների ղեկավարների, շնորհավորական ուղերձներ են հղել Ֆրանսիայի Հանրապետության, Ուկրաինայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Լիտվայի, Լիբանանի, Սլովակիայի հանրապետությունների, Եգիպտոսի Արաբական Հանրապետության և Բուրյելի Պետության նախագահները:

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի շնորհավորական ուղերձում ասված է. «Հարգելի պարոն Նախագահ,

Ընդունեք ամենաջերմ շնորհավորանքներս 2013թ. փետրվարի 18-ի ընտրություններում Ձեր հաղթանակի կապակցությամբ: Համոզված եմ, որ այն կուժեղացնի ժողովրդավարական, կայուն և բարգավաճ, բոլոր հարևանների հետ խաղաղության մեջ ապրող Հայաստան կերտելու Ձեր կամքը: Ցանկանում եմ նորից ընդգծել Ֆրանսիայի աջակցությունն այս ուղղությամբ տարվող Ձեր ջանքերին:

Ընտրություններից հետո, վերահաստատում եմ նաև վճռականությունս գործի դնել ամեն հնարավորը՝ ի նպաստ Հարավային Կովկասում խաղաղության և կայունության: Մինակի խմբի համանախագահ և Հայաստանի բարեկամ Ֆրանսիան մնում է վճռական օժանդակելու չափազանց երկար տևած Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ և արդար կարգավորմանը:

Օգտվում եմ առիթից վերահաստատելու իմ անձնական կապակցությունը մեր երկու ժողովուրդներին միավորող բարեկամությանը: Համոզված եմ, որ մեր հետագա երկկողմ ձեռնարկումները հնարավորություն կընձեռեն ամրապնդելու մեր համագործակցությունը՝ մասնավորապես տնտեսական ոլորտում, որը նույն բարձրության վրա չէ, ինչպիսիք մեր քաղաքական շփումներն են»:

Հայաստանի նախագահ Մերժ Սարգսյանի վերընտրվելու առիթով շարունակում են շնորհավորանքներ ստացվել օտարերկրյա պետությունների ղեկավարներից, միջազգային կազմակերպությունների, պետական եւ հասարակական հաստիքի ներկայացուցիչներից, անհատ քաղաքացիներից:

Մերժ Սարգսյանին ուղղված Չինաստանի նախագահ Հու Ջինթաոյի շնորհավորական ուղերձում ասված է.

«Ձերդ Գերազանցություն,

Անկեղծ շնորհավորանքներ եւ բարեմաղթանքներ եմ հղում Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում վերընտրվելու առթիվ:

Մենք շատ ուրախ ենք, որ վերջին տարիներին Ձեր ղեկավարությամբ Հայաստանում պահպանվում է քաղաքական եւ հասարակական կայունությունը, տնտեսությունն անընդհատ զարգանում է, ժողովրդի կենսամակարդակը օրեօր բարձրանում է, արտաքին կապերն անշեղորեն ընդլայնվում են, մեծ հաջողությունների էք հասել երկրի զարգացման գործում:

Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը վստահություն է հայտնել, որ հայ-ուկրաինական երկկողմ համագործակցությունը կշարունակի այսուհետ ևս զարգանալ բարեկամության և փոխըմբռնման ամուր հիմքի վրա: «Հայ ժողովրդի բարեկեցության բարելավման ուղղությամբ Ձեր երկարամյա աշխատանքն ու ջանքերը հերթական անգամ լայն աջակցություն ստացան Հայաստանի քաղաքացիների կողմից»,- Մերժ Սարգսյանին ուղղված իր շնորհավորական ուղերձում ասել է Ուկրաինայի նախագահը:

Լիտվայի Հանրապետության նախագահ Դալիա Գրիբաուսկայտեն Մերժ Սարգսյանին ուղղված շնորհավորական ուղերձում հույս է հայտնել, որ նրա նախագահության երկրորդ ժամանակահատվածում հայ-լիտվական հարաբերություններն այսուհետ ևս կամրապնդվեն տնտեսական, մշակութային և քաղաքական կապերի զարգացման ճանապարհով: «Ցանկանում եմ նաև, որ Եվրոպայի հետ Հայաստանի մերձեցման արդեն թափ հավաքող գործընթացը դառնա մեր երկրները միավորող ամուր և փոխշահավետ օղակ»,-ասված է Լիտվայի Հանրապետության նախագահի ուղերձում:

Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ շնորհավորել է Հանրապետության ղեկավարին ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ, հաջողություններ մաղթել գործունեության մեջ՝ վստահություն հայտնելով, որ բարձր մակարդակի փոխհարաբերությունները երկու բարեկամ պետությունների և հայ ու իբրանացի ժողովուրդների միջև նույն ոգով կշարունակեն զարգանալ և ամրապնդվել:

Սլովակիայի նախագահ Իվան Գասպարովիչն իր ուղերձում ևս մեկ անգամ հաստատել է Սլովակիայի ցանկությունը և հետաքրքրությունը՝ շարունակելու բազմակողմանի և փոխշահավետ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության հետ: «Կստան եմ նախորդ տարիների ընթացքում մեր պետությունների միջև ձեռքբերված համագործակցությունն այսուհետ ևս կամրապնդվի: Հույս ունեմ, որ մենք կշարունակենք զարգացնել փոխգործակցությունը և ինտենսիվ երկխոսությունն ինչպես մեր

պետությունների կառավարությունների, այնպես էլ պետությունների ղեկավարների մակարդակով,- ասված է Մլովակիայի նախագահի ուղերձում:

Իրանի Բուլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հույս է հայտնել, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախագահության երկրորդ շրջանում Հայաստանի զարգացման ընթացքը կշարունակվի շատ ավելի մեծ արագությամբ: «Շեշտելով Իրանի Բուլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամական և ամուր հարաբերություններն ընդլայնելու ուղղությամբ պատրաստակամությունը Աստուծոց հայցում եմ Ձերդ Գերազանցությանը քաջառողջություն և հաջողություններ, իսկ բարեկամ Հայաստանի կառավարությանն ու ժողովրդին՝ բարօրություն և փառք»,-ասված է Իրանի նախագահի ուղերձում:

Եգիպտոսի նախագահ Մոհամեդ Մուրսին Հանրապետության նախագահին շնորհավորել և նրա մեծ ձեռնարկումներին հաջողություններ է մաղթել՝ բարեկամ հայ ժողովրդի փափագած առաջընթացը և բարեկեցությունը ապահովելու համար:

Իսրայելի Պետության նախագահ Շիմոն Պերեսն Իսրայելի ժողովրդի և անձամբ իր անունից՝ Նախագահ Սերժ Սարգսյանին շնորհավորել և հաջողություններ է մաղթել՝ վստահություն հայտնելով, որ Հայաստանի և Իսրայելի միջև հարաբերություններն ու համագործակցությունը կշարունակեն ընդլայնվել և ամրապնդվել:

ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարը Սերժ Սարգսյանին շնորհավորել է վերընտրվելու կապակցությամբ:

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին շնորհավորել է Սերժ Սարգսյանին ՀՀ նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

Նախագահական ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ Սերժ Սարգսյանը շարունակում է շնորհավորանքներ ստանալ:

Ու՞մ է ձեռնտու

01 Փետրվարի 2013

ԱԻՄ առաջնորդ, ՀՀ նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի դեմ կատարված մահափորձի վարկածները կարող են բավականին շատ լինել՝ պայմանավորված լինելով անձնական, գործնական, քաղաքական և այլ բնույթի խնդիրներով:

Նախաքննությունն ընթանում է և ճիշտ չէ պնդել կամ կածիքներ հայտնել որոշակի վարկածների մասին: Մինևույն ժամանակ, կատարված դեպքը հետաքրքիր է նախագահական ընտրությունների համատեքստում: Հասարակական-քաղաքական որոշակի շրջանակներ արդեն իսկ խոսում են մահափորձի քաղաքական ենթատեքստերի մասին՝ հիմնական շեշտը դնելով ընտրությունները ստվերելու և իրավիճակն ապակայունացնելու վրա: Այս մոտեցումը բավականին հետաքրքիր է, հատկապես, երբ հաշվի ենք առնում այն փաստը, որ նախընտրական գործընթացներն մեծամասամբ ընթանում են հանդուրժողականության մթնոլորտում, առանց հուզումների և քաղաքական իրավիճակի սրեցման: Միգուցե սա՞ է պատճառը, որ տեղի և արտասահմանյան որոշ շրջանակներ փորձում են ապակայունացնել իրավիճակն ու «պղտոր ջրում ձուկ որսալ»: Խնդիրն այն է, որ նախագահական ընտրությանը Սերժ Սարգսյանը մրցակից չունի, իսկ հնարավոր մրցակիցները, ինչ-ինչ

պատճառներով դուրս գալով նախագահական մրցակազմից դեռևս 2012թ.վերջերին, անթաքույց նախանձով են հետևում քարոզարշավին:

Ի դեպ, 2013թ. նախագահական ընտրությունը Հայաստանի անկախության շրջանում բացառիկ նշանակություն ունի, քանզի նախագահի հիմնական թեկնածու Սերժ Սարգսյանը բացառիկ հնարավորություն ունի լուծելու լեզիտիմության խնդիրը՝ ստացած քվեների համար պարտական լինելով միայն ու միայն ՀՀ քաղաքացուն: Այս իրավիճակում նախագահ Սարգսյանը հնարավորություն կունենա բեկում մտցնել Հայաստանի զարգացման գործընթացում՝ ի գործ լինելով լուծել մի շարք բովանդակային խնդիրներ: Հնարավոր է, որ այս հեռանկարը ձեռնտու չէ Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքում որոշակի ազդեցություն և էլ ավելի հսկայական հավակնություններ ունեցող քաղաքական-տնտեսական խմբավորումներին և նրանց արտասահմանյան հովանավորներին: Հարց կարող է առաջանալ, ինչու՞ Պարույր Հայրիկյանը, այլ ոչ Հրանտ Բագրատյանը կամ Արման Մելիքյանը: Խնդիրն այն է, որ Հայրիկյանը հայտնի է միջազգային քաղաքական շրջանակներում դեռևս խորհրդային կայսրության դեմ ծավալած պայքարի տարիներից՝ Արևմուտքում և ԱՊՀ տարածաշրջանում համարվելով հակախորհրդային թիվ մեկ դիսիդենտը, ուստի և ադմուկը շատ ավելի մեծ կլինի՝ աննկատ չմնալով նաև միջազգային լրատվական գործակալությունների ուշադրությունից: Ինչևէ, նախաքննությունը կտա բոլոր հարցերի պատասխանը: Իսկ մինչ այդ, հասարակությունն ու քաղաքական գործընթացի մասնակիցները պետք է պատրաստ լինեն դիմակայելու իրավիճակի ապակայունացմանը միտված նոր փորձություններին, սադրանքներին և մարտահրավերներին: Արամ Ենգիբարյան

Երեւան-Վան առաջին ուղիղ չվերթն ապրիլի 3-ին է



Մարտ 01, 2013 | 13:37

Մի քանի տարվա նախապատրաստական աշխատանքներից հետո սկսվում է Երեւան-Վան ուղիղ չվերթը, որի առաջին չվերթը կլինի ապրիլի 3-ին: Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է «Նարեկավանք տուր» ընկերությունից, ապրիլի 3-ից շաբաթական երկու անգամ

կլինեն ուղիղ չվերթներ Երեւանից Վան եւ հակառակ ուղղությամբ:

Երեւան-Վան-Երեւան չվերթի միայն տոմսի արժեքը կլինի 250 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Առաջին ամսվա համար տոմսերը կլինեն 20 տոկոս զեղչով՝ 200 դոլարին համարժեք դրամով:

Լինելու են նաեւ զբոսաշրջային ամբողջական փաթեթներ՝ 3, 4 եւ 7 օրով, որոնց արժեքը լինելու է 180 հազարից սկսած՝ ներառյալ ավիատոմսեր, սնունդ եւ հյուրանոցներ:

Երեւան-Վան-Երեւան չվերթն իրականացվելու «Նարեկավանք տուր» ընկերության, Վանի «Այանիս» ընկերության եւ թուրքական «Բորա ջեթ» ավիաընկերությանը պատկանող եվրոպական արտադրության ATR 72-500 օդանավերով: Թռիչքի տևողությունը կլինի 40 րոպե:

Ժամկետային զինծառայող է սպանվել

20 Փետրվարի 2013 - 14:03

Փետրվարի 19-ին հակամարտ գորքերի շփման գծի հյուսիս-արևելյան ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում, հակառակորդի կողմից արձակված գնդակից մահացու վիրավորում է ստացել ժամկետային զինծառայող Գոռ Արթուրի Ղազարյանը (1992 թվական): Միջադեպի հետ կապված մանրամասները պարզելու համար տարվում է քննություն: Այս մասին հայտնում են ԼՂՀ ՊԲ տարածած մամուլի հաղորդագրությունում: ԼՂՀ ՊԲ-ն կիսում է ծանր կորուստն ու վիշտը ու իր ցավակցությունը հայտնում գոհվածի ընտանիքի անդամներին, հարազատներին և ծառայակիցներին: HayNews.am

Կոչ են անում չապակայունացնել Սամցխե-Ջավախքի տարածաշրջանը

20 Փետրվարի 2013 - 15:51

Հաշվի առնելով վերջին մեկ շաբաթվա ընթացքում Սամցխե-Ջավախք տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները, այն է՝ իշխող «Վրացական Երազանք» կոալիցիայի ակտիվիստների եւ «Միացյալ Ազգային Շարժման» կողմնակից Ախալքալաքի շրջանի պաշտոնյաների կողմից կազմակերպված հանրահավաքները, Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը կողմերին կոչ է անում չապակայունացնել տարածաշրջանը եւ առաջնահերթությունը տալ տարածաշրջանում առկա հրատապ մի շարք խնդիրների լուծմանը: Խորհուրդը նաեւ դիմում է Ջավախքի ազգաբնակչությանը լինել կազմակերպված, չտրվել Վրաստանում տեղի ունեցող ներքին իրադարձություններին, քանզի տարածաշրջանի կայունությունը խախտելը չի բխում մեր ազգաբնակչության շահերից:

Կայացել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի հերթական նիստը

22 Փետրվարի 2013 - 12:31



Վարչապետ Տիգրան Մարգարյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի կառավարման խորհրդի հերթական նիստը:

Օրակարգի առաջին հարցով խորհրդին է ներկայացվել առկա նախագծերի հիման վրա Արտաշատ-Երևան, Աշտարակ-Թալին կառուցվող ճանապարհահատվածի եռաչափ մոդելավորումը: Արձանագրվել է, որ ճանապարհահատվածների կառուցման տեխնիկական լուծումները համապատասխանում են միջազգային չափանիշներին:

Այնուհետև քննարկվել է տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏՕ) իրականացման ընթացքը: Ծրագիր ընթանում է ըստ սահմանված ժամանակացույցի: Հողերի օտարման գործընթացի իրականացումը սկսվել է ՀՀ Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր, Եղնիկ, Դավթաշեն, Վերին և Ներքին Սասնաշեն համայնքների ազդեցության ենթակա հողերի օտարումից: Կնքվել են 124 օտարման պայմանագրեր մասնավոր և համայնքային հողերի ձեռքբերման համար, որոնց մասով տրվել են համապատասխան փոխհատուցումներ: Ճանապարհահատվածում WGS համաշխարհային գեոդեզիական կոորդինատային 2-րդ դասի ցանցերի ստեղծման կատարումը հանձնարարվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին: Տիգրան Մարգարյանը ծրագրի ղեկավարներին հանձնարարել է ուշադրության կենտրոնում պահել ճանապարհահատվածի անվտանգության չափանիշների պահպանման հարցերը՝ միջազգային տեխնիկական լուծումներին համապատասխան:

HayNews.am

Հայաստանի ԱԳՆ-ն 2012-ին շարունակել է աշխատանքը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ

Հունվար 24, 2013 | 13:42

Հայաստանի արտաքին գործերի նախարարությունն ղեկավարող անդամները ներկայացուցությունները 2012թ. մի շարք քայլեր են ձեռնարկել ի կատարումն Ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի ստեղծման մասին ՀՀ նախագահի հրամանագրի: Այդ մասին ասվում է Հայաստանի ԱԳՆ-ի 2012թ. Ձեկնույցում:

«Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցի կապակցությամբ բազմաթիվ երկրներում անց են կացվել ոգեկոչման եւ հիշատակի հարյուրավոր միջոցառումներ, կազմակերպվել են կոնֆերանսներ եւ ցուցահանդեսներ, որոնց աջակցություն են ցուցաբերել ՀՀ ղեկավարող անդամները ներկայացուցությունները: 2012թ. հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը: Չնայած օրենքի ուժի մեջ մտնելուն խոչընդոտ հանդիսացավ Ֆրանսիայի Սահմանդրական խորհրդի որոշումը, Ֆրանսիայի նորընտիր նախագահ Ֆրանսուա Հոլանդը տարբեր առիթներով բազմիցս վերահաստատեց նպատակադրվածությունը հասնելու Ֆրանսիայում Հայոց ցեղասպանությունը ժխտումը քրեականացնող օրենքի ընդունմանը»,- ասված է զեկնույցում:

Արցախ

Բակո Սահակյանը շնորհավորեց Արցախյան շարժման 25-ամյակը

20 Փետրվարի 2013 - 17:34



Հեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը Արցախյան շարժման 25-ամյակի կապակցությամբ ուղերձ է հղել, որում, մասնավորապես ասվում է:

«Թանկագին հայրենակիցներ, Սիրելի արցախցիներ, Քսանհիյնգ տարի առաջ այս օրը շրջադարձային եղավ Արցախի եւ ողջ հայ ժողովրդի համար: Մենք ազգովի

ուրքի ելանք միջազգային հիմնարար նորմերին ու սկզբունքներին համահունչ խաղաղ եւ օրինական պահանջով՝ վերականգնելու պատմական արդարությունը, պաշտպանելու մեր ոտնահարված արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները:

1988-ի շարժման հիմքում ընկած էր մեր ժողովրդի պայքարը՝ օտար լծի, մոտ յոթ տասնամյակների ընթացքում չդադարող բռնությունների եւ ճնշումների դեմ: Չնայած այդ ամենին, ազգային-ազատագրական այս պոռթկումը չէր սերմանում թշնամանք ու ազգային սատելություն հարեւան ժողովրդի հանդեպ: Բայց Ադրբեջանը մեր քաղաքակիրթ պահանջներին ու խաղաղ ցույցերին պատասխանեց կոտորածներով, ջարդերով, տեղահանումներով ու հալածանքներով: Կրկին փորձ արվեց հայկական հարցը լուծել արդեն իսկ փորձարկված մեթոդով՝ ցեղասպանությամբ:

Սակայն այս անգամ այդ հրեշավոր քաղաքականությունը դատապարտված էր ձախողման: Համայն հայությունը միավորվեց ու բռնեցվեց՝ ի պաշտպանություն Արցախի, հայրենի երկրի ու ժողովրդի, նրա պատվի ու հուսալի ապագայի: Հայ ազգի լավագույն զավակների արյան գնով, սխրանքների եւ անձնվիրության շնորհիվ մենք կարողացանք ոչ միայն պաշտպանել մեր անկախությունն ու ազատությունը, այլ նաեւ արժանի հակահարված տալ թշնամուն՝ խաղաղություն եւ կայունություն հաստատելով ողջ տարածաշրջանում: Հավերժ փառք ու պատիվ հայրենիքի նվիրյալներին:

Սիրելի հայրենակիցներ, Անդրադարձ կատարելով 25 տարվա մեր անցած ճանապարհին՝ կարող ենք պատվով ու հպարտությամբ արձանագրել, որ կյանքի կոչելով 88-ի գաղափարները, հայ ժողովուրդը վերականգնել է իր պետականությունը, եւ այսօր Հայաստան-Արցախ-Սփյուռք կուռ եռամիասնության շնորհիվ ինքն է տնօրինում իր ճակատագիրը, անսասան պահում հայրենի երկրի սահմանները, շենացնում պայտերի հողն ու վառ պահում հարազատ օջախի կրակը:

Մենք այսուհետ էլ ազգովի կանենք ամեն ինչ այսպան թանկ գնով նվաճած մեր անկախ պետականության շարունակական ամրապնդման համար: Դա բացառիկ արժեք է, առանց որի անհնար է պատկերացնել հայրենիքի ու ժողովրդի հարատեւումն ու գորացումը:

Թանկագին արցախցիներ, Հանրապետության իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ, Հայաստանի եւ Սփյուռքի մեր բոլոր քույրերին ու եղբայրներին այս մեծ տոնի կապակցությամբ: Մաղթում եմ խաղաղություն, քաջառողջություն եւ մեծագույն հաջողություններ»:

Լևոն Տեր-Պետրոսյանը դեմ էր Խոջալուի և Շուշիի ազատագրմանը

20 Փետրվարի 2013 - 16:20



Արկաղի Տեր-Թադևոսյանի Արցախյան շարժման 25-ամյակի առիթով հրավիրված ասուլիսին եկել էր փաստաթղթային փաթեթով՝ ասելու այն, ինչի մասին չի խոսվում:

Կոմանդոսը վստահեցրեց՝ Խոջալուի ազատագրման գործողություններն ավելի վաղ կսկսվեին, եթե այն ժամանակվա Հայաստանի իշխանությունները չխոչընդոտեին. «Գիշերը պետք է սկսվեր Խոջալուի օպերացիան, բայց հանկարծ գիշերվա ժամը 5-ին Հայաստանից նամակ ենք ստանում, որում պահանջում են դադարեցնել ռազմական գործողությունները»: Բնականաբար, Կոմանդոսը չըջանցեց նաև Շուշիի ազատագրման հետ կապված տարակարծությունները: Արկաղի Տեր-Թադևոսյանը պնդեց՝ ՀՀ առաջին նախագահը դեմ էր Շուշիի ազատագրմանը. «Տեր-Պետրոսյանն ասել էր՝ դուք քանի գլխանի եք, որ որոշել եք ազատագրել Շուշին: Աշոտ Բլեյանը, Էդուարդ Գրիգորյանը, Աշոտ Մանուչարյանն էլ դեմ էին»: ՀՀ առաջին նախագահին հասցեագրված մեղադրանքներն այսքանով չսահմանափակվեցին, ավելի ուշ՝ Արկաղի Տեր-Թադևոսյանը նկատեց, թե Լևոն Տեր-Պետրոսյանը բանակցությունները վարում էր, Արցախն Ադրբեյջանի կազմում թողնելու տրամաբանության շրջանակում, ինչին դարաբաղյան ղեկավարությունը դեմ էր. «1994 թ կնքված զինադադարի փոխարեն պետք է կնքվեր հաշտության պայմանագիր և «հարցը պետք է վերջնականապես փակվեր»:

HayNews.am-ի հարցին՝ այսօրվա իշխանությունների արտաքին քաղաքականությունն Արցախի հարցում ձեռ գոհացնում է, ի վերջո, բանակցային սեղանին դրված փաստաթղթի բովանդակությունը մեծ փոփոխությունների չի ենթարկվել այս տարիներին, Կոմանդոսը պատասխանեց. «Ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ (1992-1996 թթ.) Վլադիմիր Կազիմիրովն է ասում՝ բանակցությունները պետք է սկսել զրոից և Արցախին վերադարձնել բանակցային սեղան: Մենք շատ ժամանակ ենք կորցրել: Դա մեր մեծագույն սխալներից մեկն էր: Արցախի

միջազգային ճանաչումը դեռ շատ կձգձգվի, բայց մենք մեծ հաշվով ճիշտ ուղու վրա ենք այս առումով: Բակո Սահակյանն ու Մերթ Սարգսյանն իմ ընկերներն են ու համախոհները: Նրանք չեն կրկնի այն սխալները, որ նախկինում թույլ էր տալիս Հայաստանը»: Վերջին մտքի համատեքստում Արկաղի Տեր-Թադևոսյանը նշեց, թե ՀՀ-ն ինչ իրավունքով է խոսում արտագաղթից և ձերբակալություններից, երբ դրանց հիմքերն իրենց օրոք էն դրվել. «Իմ զինակից ընկերներից, օրինակ, Վալերի Բալայանին, ով նաև Շուշիի ազատագրման էր մասնակցել՝ նստեցրեցին, շատերն էլ փախան երկրից, որ նույն ճակատագրին չարժանանան»: Կոմանդոսն ասաց, թե ՀՀ երկրորդ նախագահի պաշտոնավարման տարիներին էլ իրեն ցանկացել են քաղաքական խաղերի մեջ ներքաշել, բայց հրաժարվել է. «Ինձ ստիպում էին աջակցել նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Պատկերացրեք իմ վիճակը, որ ինձ ասում էին ինչ-որ մեկին սատարեք, ես չէի կարող սատարել Ռոբերտ Քոչարյանին, ես հարգում եմ նրան, բայց ես քաղաքական գործիչ չեմ»: Կոմանդոսը հիշեցրեց, որ քաղաքական հարթությունում վեճեր է ունեցել նաև Լևոն Տեր-Պետրոսյանի օրոք, երբ փորձում էր կամուրջ լինել ՀՀ-ի և Դաշնակցության միջև. «Դրանից հետո դաշնակները կարծեցին, թե ես ՀՀ-ական եմ»:

HayNews.am

Արեւմտյան Շայաստան

Այն փողոցը, որտեղ ծնվել է Հրանտ Դինքը, կոչել են նրա անունով




Փետրվար 05, 2013 | 16:13

Թուրքիայի Մալաթիայի քաղաքապետ Ահմեդ Չաքքըը հայտարարել է, թե քաղաքի բազմաթիվ փողոցներ են վերանվանել շեռելով, թե հիշել են նաև Մալաթիայում ծնված եւ 2007-ին սպանված Հրանտ Դինքին:

Թուրքական Radikal-ի փոխանցմամբ Մալաթիայի քաղաքապետ Ահմեդ Չաքքըը նշել է, թե քաղաքում փողոցների վերանվանումներում չեն մոռացել Մալաթիայում ծնված հայտնի մարդկանց: Նա նշել է, թե այն փողոցում, որտեղ ծնվել է Ստամբուլի հայկական «Ակոս» շաբաթաթերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը, քաղաքապետարանը որոշում է կայացրել վերանվանել նրա անունով:

Միջազգային

Ավստրալացի պատգամավորը խորհրդարանում բարձրացրել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը



Փետրվար 22, 2013 | 02:13

Ավստրալիայի դաշնային խորհրդարանի անդամ, Ավստրալիայի շքանշանով պարգևատրված Ջոն Ալեքսանդրը խորհրդարանում բարձրացրել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Այս մասին հաղորդում է «Armenia Online».

ավստրալիական ինտերնետ պարբերականը: Իր հայտարարությունում Ալեքսանդրը բարձր է գնահատել ավստրալահայ Ժակ Բարանի կյանքը, ով ճանաչվել է Ռայդ քաղաքի տարվա քաղաքացի:

Ալեքսանդրը, մասնավորապես, նշել է. «20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանությունը ստիպել է նրանց ցրվել ողջ աշխարհով մեկ, ինչը բազմաթիվ խոչընդոտներ է ստեղծել հայերի յուրօրինակ մշակույթի պահպանման համար»:

Եվրամիությունը ողջունում է առաջընթացը հայաստանյան ընտրություններում



20 Փետրվարի 2013 - 17:08

Եվրամիությունը ողջունում է Հայաստանում նախագահական վերջին ընտրություններում արձանագրված առաջընթացը, միևնույն ժամանակ կոչ է անում արձագանքել առկա մտահոգություններին ու բարեփոխել ընտրական օրենսդրությունը:

Այդ մասին ասվում է Եվրամիության փոխնախագահ, արտգործնախարար Քեթրին Էշթոնի եւ ընդարձակման

հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի՝ այսօր տարածած հայտարարության մեջ, փոխանցում է «Ազատություն» ռադիոկայանը:

Հաշվի առնելով ընտրությունների նախնական արդյունքները, ինչպես նաեւ միջազգային դիտորդների հրապարակած գնահատականները՝ պաշտոնական Բրյուսելը հայտարարում է. - «Մենք ողջունում ենք, որ Հայաստանի իշխանությունները շարունակել են առաջընթաց արձանագրել այս ընտրությունները միջազգային չափանիշներին համապատասխան անցկացնելու իրենց ջանքերում»:

Եվրոպացի երկու բարձրաստիճան պաշտոնյաների համատեղ հայտարարությունը փաստում է, որ այս ընտրություններում հատկապես բարեփոխվել է ընտրական գործընթացի վարչարարությունը, երաշխավորվել է բոլոր թեկնածուների՝ ազատորեն քարոզարշավ իրականացնելու իրավունքը, բարելավվել է ընտրացուցակների որակը:


«Միևնույն ժամանակ, արտաքին հարցերով բարձրագույն հանձնակատար Էշթոն եւ ընդարձակման հարցերով հանձնակատար Ֆյուլեն ակնկալում են, որ առաջիկայում Հայաստանի իշխանությունները պատճառ կարգով արձագանքեն մի շարք ակնառու մտահոգությունների, այդ թվում՝ հանրային ծառայողների կողմնակալության, վարչական ռեսուրսի չարաշահման եւ ընտրողների վրա ճնշում գործադրելու վերաբերյալ հաղորդումներին», - «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում ասում է Ֆյուլեի խոսնակ Պիտեր Մտանոն եւ հավելում. - «Մենք նաեւ քաջալերում ենք Հայաստանի իշխանություններին սկսել ընտրություններին վերաբերող օրենքները բարեփոխելու համապարփակ եւ թափանցիկ գործընթաց՝ 2012-ի խորհրդարանական ընտրություններից հետո միջազգային դիտորդների տված հանձնարարականներին համապատասխան»:

Բրյուսելում աշխատող «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Ռիկարդ Յոզվյակը հետաքրքրվել է, թե արդյոք այս գնահատականից հետո Հայաստանը կարող է ակնկալել առավել մեծ աջակցություն Եվրոպական կառույցներից: Ի պատասխան՝ Եվրոպացի պաշտոնյան հորդորել է մի փոքր սպասել: «Հաջորդ ամիս մարտին, մենք կիրառարակենք մեր հերթական զեկույցը՝ Հարեւանության անդամ երկրներից յուրաքանչյուրի, այդ թվում՝ Հայաստանի արձանագրած առաջընթացի մասին, եւ այդ ժամանակ ձեր հարցի պատասխանն առավել հստակ կլինի», - ասել է Եվրամիության ընդարձակման հարցերով հանձնակատարի խոսնակ Պիտեր Մտանոն:

Ընտրությունների լավ կազմակերպումը ողջունող հայտարարությամբ է հանդես եկել Եվրոպայի ամենամեծ քաղաքական ուժի՝ Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) ղեկավար Վիլֆրիդ Մարտենսը, ով նաեւ շնորհավորել է Մերժ Սարգսյանին՝ հաղթանակի կապակցությամբ: «Ես ուրախ եմ, որ այս ընտրությունները լավագույնս էին երկրում անցկացված ընտրությունների մեջ եւ մեծամասամբ

համապատասխանում էին միջազգային չափանիշներին», - հայտարարել է ԵՏԿ-ի նախագահը եւ վստահություն հայտնել, թե Հայաստանի ժողովրդավարացման գործընթացը է՛լ ավելի կընդլայնվի Մերժ Սարգսյանի նախագահության ներքո:

Թուրք ազգայնական լրագրողը՝ Օջալանի հայ լինելու մասին



Փետրվար 09, 2013 | 00:04

Թուրքական Milli Gazete պարբերականի լրագրող Մեհմեդ Շեքեր Էյզինն իր «Հարցն այդքան հեշտ եւ մատչելի չէ» զավեշտալի հրապարակման մեջ կրկին օրակարգ է բերել PKK-ի առաջնորդ, Իմրալը կոչում ցմահ բանտարկված Աբդուլլահ Օջալանի հայ լինելու մասին խոսակցությունները՝ փորձելով Թուրքիայի քուրդ բնակչությանը հավատացնել, թե պետք չէ հավատալ «հայ» Օջալանին եւ «հայերի» կողմից ստեղծված PKK-ին (Քուրդիստանի բանվորական կուսակցություն):

Թուրքական Habervaktim.com կայքը ներկայացրել է հիշյալ հրապարակումը, որում թուրք լրագրողը, փաստարկելով թե ինչու Թուրքիայում քրդական հարցը չի լուծվի, բերում է 7 կետից բաղկացած հիմնավորում.

1. PKK-ն վերջին 30 տարում հարյուրմիլիարդավոր դոլարների հասնող թմրանյութերի եւ անօրինական զենքերի վաճառքով է զբաղվել: Ումանք շատ գումար են աշխատել եւ հարստացել:
2. PKK-ն դրսից քրդական շարժման պես է երեւում, սակայն այն իրականում գաղտնի հայկական շարժում է, որն ուզում է Անատոլիան կրկին քրիստոնյաների հայրենիք դարձել եւ մեծ Հայաստանի երազանքն իրականացնել: Այս գործի հետեւում են սիոնիզմը, իմպերիալիզմը եւ խորքային ուժերը: Հայերը Թուրքիայից պահանջում են այսօրվա Հայաստանի 4 կամ 5 անգամ ավելի մեծ հող: Այսինքն, PKK-ին չի լինի վերացնել, էթե փորձեն վերացնել, կվերացնեն այդ փորձն անողին:
3. Այն ժամանակահատվածում, երբ PKK-ն շարունակվի դիտարկվել որպես քրդական շարժում, ահաբեկչությունը չի վերանա:
4. Այսօր մեր երկրում ապրում են մեկ միլիոն երկքաղաքացի քրիստոնյաներ եւ այդքան էլ՝ հրեաներ:

5. Շատ կարելու դիրքերում են գտնվում եւ արտաքուստ մուսուլման են ձեւանում Բագրատունիները, ովքեր երկերեսանի քաղաքականություն են իրականացնում: Մինչ Բագրատունիները չբացահայտվեն, ահաբեկչությունը չի վերանա:
6. PKK-ի խաղում շատ կարելու մի անձի երկու անուն կա՝ մեկը՝ մուսուլմանական քրդական անունն է, մյուսը՝ գաղտնի եւ հիմնական անունը՝ Արթին: Այն պնդումը ճիշտ է: Եթե ճիշտ է, ապա պետք է բացահայտվի, հակառակ դեպքում՝ ահաբեկչությունը չի վերանա:
7. Եվրամիությունը, ԱՄՆ-ը, Միոնիզմը, խաչակիրները եւ իմպերիալիստները մտադրվել են Թուրքիան պատակտել: Եւ մինչեւ նրանց պլանները չխառնենք, խաղը չենք հաղթի:

Habervaktim.org կայքն այս հրապարակման վերջում ներկայացնում նաեւ իր պնդումները Աբդուլլահ Օջալանի հայ լինելու մասին, ըստ որի, Օջալանի հայրը հայ է: «Օջալանի գյուղը՝ Ամարան, նախկինում հայկական բնակավայր է եղել: Աբդուլլահ Օջալանին ընտանիքում ասել են Արթին Հակոբյան: Բացի այդ, Աբդուլլահ Օջալանը քրդերեն էլ չգիտի:

Ամարա գյուղը, որտեղ ապրում է Օջալանի ընտանիքը, իրականում հայկական գյուղ է: Սակայն գյուղի բնակչությունը 1915-ի տեղահանության ժամանակ փոխել է ինքնությունը եւ քրդացել: Գյուղի բնակչությունը փոխել է նաեւ անուններն ու կրոնը: Թուրքիայում այդ գյուղի պես հազարավոր գյուղեր կան:

Թուրքիայի պատմագիտական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Հալաչօղլուն բազմիցս հայտարարել է, որ PKK-ում եւ BDP-ում (քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցություն) բազմաթիվ հայեր կան եւ Օջալանն էլ հայ է: Հալաչօղլուն նաեւ հայտնել էր քրդացած հայերի գյուղերի անունները:

1980-ականներին ԱՄԱԼԱ-ն ցրվեց եւ նոր ինքնություն ձեռք բերելով՝ կազմավորվեց PKK-ն: Հայերը, հասկանալով, որ դրսից Թուրքիային դրսից հարվածելով արդյունքի չեն կարողանա հասնել, իրենց նպատակներն իրականացնելու համար սկսեցին Թուրքիայի ներքին գործերին խառնվել:

Հայտնի է, որ PKK-ի կազմավորվելուց մինչ այսօր նրան ամենաշատը Հայաստանն է աջակցել: Ապացուցվել են, որ քրդի անվան տակ մի շարք հայեր Թուրքիայում պատգամավոր են եղել, ինչպես նաեւ ղեկավարել են PKK-ն: Այսինքն, PKK-ն իրականում քրդական կառույց չէ: Այն քրդերին օգտագործելու միջոցով Թուրքիան բաժանելու ցանկություն ունեցող հայկական կազմակերպություն է», - նշվում է Habervaktim-ում:

Թուրքական կայքը հրապարակման վերջում մեջբերում է Սարգիս Հացյանյանի արած հայտարարությունը, թե հունվարի 9-ին Փարիզում սպանված եւ PKK-ի հիմնադիրներից հանդիսացող Սաքինե Ջանսրզը եւս հայ է:

Թուրք գործարարը Թուրքիային կոչ է անում ճանաչել Հայոց ցեղասպանությունը.



Փետրվար 04, 2013 | 00:04

Թուրքական «Ոչ ասենք ռասիզմին եւ ազգայնականությանը» շարժման կայքի գլխավոր էջում հայտնվել է հրեական արմատներով թուրք խոշոր գործարար, «Ալարկո» հոլիդինգի սեփականատեր Բահաթ Ալաթոնի ամիսներ առաջ «Թուրքիայի տնտեսական եւ սոցիալական հետազոտությունների» հիմնադրամին (TESEV) ուղարկած նամակը, որում կոչ է անում ջանքեր գործադրել, որպեսզի Թուրքիան ընդունի Հայոց ցեղասպանությունը:

«Միբելի բարեկամներ, 2015-ին դեռ 3 տարի կա, սակայն այն շատ աննկատ կանցնի... Մոտենում է 2015-ի ապրիլի 24-ը եւ եկեք մեր մերժողական քաղաքականությունը փոխենք: Արդեն ամոթ է... Ես հոգնել եմ անցյալի հետ առերեսվելու վախից: Եկեք բարձրացնենք մեր ձայնը: Մեր երկրի եւ հասարակության հանդեպ հարգանք ստեղծելը մեր ապագա սերունդների հանդեպ մեր պարտքն է:

90 տարի մենք բազմաթիվ մեղքեր ենք գործել: Կոմիսիաները լցրել ենք պահարանները եւ փակել դռները: 90 տարի է՝ աշխարհին կույր ենք ասում: Վախենում ենք առերեսվել: Մեզ սովորեցրել են վախենալ: Կոմիսիաները պահարաններում փտում են, իսկ դրանց հոտն արդեն անտանելի է դարձել: Ես արդեն չեմ կարողանում շնչել, իսկ դու ւր: Ես շատ նախաձեռնի բուլղարացի պատգամավորներին, ովքեր ընդունեցին, որ թուրքերի հանդեպ անիրավ են վարվել:

Եկեք մենք էլ մեր ձայնը լսելի դարձնենք Անկարայի մեր պատգամավորներին: Պատգամավորներն էլ թող այն լսելի դարձնեն իրենց կուսակցությունների ղեկավարներին: Թող օգնեն, որ կարողանանք բացել կոմիսիաներով լեցուն մեր պահարանները: Մեզ հարիր հուղարկավորության միջոցառումները հետո մեկ թույլ տրույ՞նք հարգանքի տուրք մատուցենք եւ մաքրենք մեր մեղքերը:

«Արդարամիտ մարդուն հարիր չէ հայրերի կատարած մեղքերը թողնել երեխաների եւ թոռների ուսերին», - ասում էր իմ փիլիսոփայության դասախոսը: Ես արդեն հարգանք եմ փնտրում: Մեծ նշանակություն եմ տալիս հարգանքին: Օգնեք ինձ: Հարգանքներով՝ Բահաթ Ալաթոն», - նշվում է թուրք գործարարի նամակում:

Հայ կանայք միայնակ չեն. թուրք կանայք ի պաշտպանություն հայ կանանց բողոքի երթ են իրականացրել



Փետրվար 04, 2013 | 10:01

Ստամբուլի հայերով բնակեցված Սամաթիա թաղամասում վերջին 2 ամսվա ըթնացքում տարեց հայ կանանց դեմ հարձակումների դեմ փետրվարի 3-ին բողոքի երթ են իրականացրել թուրք կանայք:

Թուրքական «Էթհա» կայքի փոխանցմամբ՝ Ստամբուլի «Ֆեմինիստական կոլեկտիվ»-ի կոչով Քոջամուսթաֆափաշայի հրապարակում հավաքված կանայք իրենց բողոքն հայտնել հայ կանանց դեմ հարձակումների եւ պատկան մարմինների անգործության դեմ:

Երթի սկզբում Քայուշ Չալլքբանը հայերենով տեքստ է կարդացել, որից հետո նույն տեքստը թուրքերենով ընթերցել է Դիրեն Շենը: Հայտարարության մեջ քննադատության է ենթարկվել իրավապահների կողմից հարձակումները որպես գողություն ներկայացնելը, ինչպես նաեւ նշվել է, որ իրավապահները որեւէ հստակ պարզաբանում չեն տալիս հարձակումների վերաբերյալ: Այնուհետ հավաքված կանայք սկսել են երթը՝ ձեռքերում պահելով. «Ես Մարիցան եմ», «Ես Եվան եմ», «Ես Թուրֆանդան եմ», «Ես Սուլթանն եմ» գրություններով պաստառները:

Շասարակական

ՎԻՃԱԿԱԳՐԱՅԻՆ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ - Թ. Հ. Թ.

Պատգամատրական ժողովի ընտրություններ (1980-2012 թթ. ներառեալ)

Այլը օրաթերթ, Թեհրան, Երկուշաբթի, 04 Փետրվար 2013

Ի՞նչ են ասում թւերը

2012 թ. նոյեմբերի 16-ին կայացան Թեհրանի հայոց թեմի Պատգամատրական ժողովի (ՊԺ) 15-րդ շրջանի ընտրությունները: Այդ առթիւ 1980 թականից սկսած «Ալիք» օրաթերթում ընտրական յանձնախմբերի հաղորդագրությունների հրապարակած տւեալների հիման վրայ փորձել ենք համեմատություններ անցկացնել

տասնամեակների ընթացքում կատարած ընտրությունների վերաբերյալ: Այս յոդանով չենք յայտնում հասարակագիտական-մասնագիտական ուսումնասիրության, սակայն յոյս ունենք, որ այս հրապարակումը կարող է առիթ հանդիսանալ սոյն բնագաւառում առաւել բանիմաց եւ մասնագէտ անհատների նոր հրապարակումների: Ուսումնասիրությունը բաժանել ենք երկու մասի. առաջինում ներկայացնում ենք 1980 թականից մինչ այսօր կայացած ՊԺ-ի ընտրությունների համեմատությունները, ինչպէս նաեւ նրա համեմատությունը խորհրդարանական ընտրությունների հետ: Իսկ երկրորդ մասում անդրադառնալու ենք ՊԺ-ի 15-րդ շրջանի ընտրություններին:

«Ալիք»-ում հրապարակւած տեղեկությունների հիման վրայ կազմել ենք յատուկ աղիւսակ, որտեղ նշւած են 1980 թականի ՊԺ-ի 10-րդ շրջանից սկսած եւ 2012 թ. 15-րդ շրջանով վերջացած ընտրությունների տւեալները: Հարկ է նշել, որ ջրաղղեցինք ձեռք բերել 2004 թականի ՊԺ-ի ընտրությունների տւեալները, որով բանաւոր կատարւած հարցումներով այդ շրջանի մասնակիցների թիւը մօտաւոր 4900 ենք նկատի առել:

Աղիւսակ Ա							
Թւական	մասնակիցների ընդհ. թիւ	Կեներոյն	Սասուն	Ջէրոյն	Սարդարապատ	Ս. Աստուծաձիմ	
1980 ՊԺ-ի 10-րդ շրջան	5628	Պատկան շրջանի թիւը	2398	1518	774	333	605
		Տոկոսային համեմատութիւնը	42%	27%	14%	6%	11%
1986 ՊԺ-ի 11-րդ շրջան	10438	Պատկան շրջանի թիւը	3981	3101	1734	536	1086
		Տոկոսային համեմատութիւնը	38%	30%	17%	5%	10%
2000 ՊԺ-ի 12-րդ շրջան	8986	Պատկան շրջանի թիւը	2788	3133	2301	466	298
		Տոկոսային համեմատութիւնը	31%	35%	26%	5%	3%
2004 ՊԺ-ի 13-րդ շրջան	4900	Պատկան շրջանի թիւը	Բացակայում են այս շրջանի տւեալները				
2008 ՊԺ-ի 14-րդ շրջան	5174	Պատկան շրջանի թիւը	997	1621	2223	219	114
		Տոկոսային համեմատութիւնը	19%	31%	43%	4%	2%
2012 ՊԺ-ի 15-րդ շրջան	5555	Պատկան շրջանի թիւը	1297	1930	2004	157	167
		Տոկոսային համեմատութիւնը	23%	35%	36%	3%	3%

Այժմ փորձենք Ա աղիւսակում նշւած թւերի հիման վրայ վերլուծել Թեհրանի հայ համայնքի հինգ ընտրատարածքների արդիւնքները՝ 1980 թականից մինչեւ այսօր:

ա- Կենտրոն ընտրատարածք

Նկատելի է, որ 1980 թականին այս շրջանը 2398 ձայնով կազմել է ընտրությունների ընդհանուր 5628 մասնակիցների 42 տոկոսը, սակայն 1986 թականին 3981 ձայնով կազմել է ընդհանուր 10438 մասնակիցների 38 տոկոսը՝ 4 տոկոսով պակաս նախորդ շրջանից, թէպէտ 1583 ձայնով աւելացել են այս շրջանի ընտրողները: Տոկոսային նազման ընթացքը շարունակւել է նաեւ 2000

թականին, այս անգամ Կենտրոնը 2788 ձայնով կազմել է ընդհանուր 8986 մասնակիցների 31 տոկոսը, 7 տոկոսով պակաս 1986 թականի համեմատ. 1193 ձայնով եւս նազել է Կենտրոնի ընտրողների թիւը:



Նոյն յարաբերակցությունը առաւել անկում է ապրել 2008 թականին կայացած ՊԺ-ի 14-րդ շրջանի ընտրություններում, երբ ընդհանուր 5174 մասնակիցների համեմատութեամբ՝ Կենտրոնը 997 ընտրողներով կազմել է ընդհանուրի 19 տոկոսը միայն: Սակայն, 2012 թականին փոքր ինչ բարելաւելով արդիւնքը՝ 1297 ձայնով կազմել է ընդհանուր 5555 մասնակիցների 23 տոկոսը՝ 300 ձայն եւս աւելացնելով մասնակիցների թիւին:

Կարելի է եզրակացնել, որ Կենտրոնը ընտրողների առումով 1980 թականի համեմատ՝ 19 տոկոսով նազում է արձանագրել ընտրությունների ընդհանուր թիւի համեմատ:

Կենտրոնում ամենաբազմամարդ ընտրությունը կայացել է 1986 թականին՝ 3981 մասնակիցներով, որը այս առումով ամենաբարձր ցուցանիշն է մինչ այսօր, սակայն տոկոսային առումով ռեկորդային է 1980 թականը՝ 42 տոկոսով:

բ- Սասուն ընտրատարածք

Այս քաղաքամասում, ըստ նոյն աղիւսակի, նկատելի է ընտրողների տոկոսային փոքր-ինչ աճ: Եթէ 1980 թականին 1518 ձայնով կազմել է ընդհանուր 5628 մասնակիցների 27 տոկոսը, ապա 1986 թականի ընտրություններում այդ համեմատությունը հասցրել է 30 տոկոսի՝ 1583 ձայնով բարձրացնելով ընտրողների թիւը, հասցնելով 3101-ի, ընդհանուր 10438-ի դիմաց:



Սասուն ընտրատարածքը 2000 թականի ՊԺ-ի 12-րդ շրջանի ընտրություններում արձանագրել է իր ռեկորդային թիւը՝ 3133 ձայնով, որը ընդհանուր 8986 ձայնի համեմատութեամբ՝ կազմել է մասնակիցների 35 տոկոսը:

2008 թականի ընտրություններում թէ՛ մասնակիցների, եւ

թե՛ տոկոսային առումով անկում է ապրել այս ընտրատարածքը: Այսպէս՝ 2008 թ. ՊԺ-ի 14-րդ շրջանի ընտրութիւններին այս քաղաքամասում մասնակցել են 1621 ընտրողներ, որը կազմել է ընդհ. 5174 մասնակիցների 31 տոկոսը, որով 2000 թականի համեմատ՝ բաւականին նւագում է նկատուում: Իսկ 2012 թ. ՊԺ-ի 15-րդ շրջանի ընտրութիւններում փոքր-ինչ աճ է արձանագրել այս ընտրատարածքը, որտեղ 1930 մասնակիցներով կազմել է ընդհանուր 5555 ձայնի 35 տոկոսը՝ 309 ընտրող աւելացնելով 2008 թ.-ի համեմատ:

զ- Զէյթուն ընտրատարածք

Այս ընտրատարածքը 1980 թ. կայացած ՊԺ-ի 10-րդ շրջանի ընտրութիւններում 774 ձայնով կազմել է ընդհանուր 5628 մասնակիցների 14 տոկոսը միայն: 11-րդ շրջանի ընտրութիւններում բաւականին աճ է արձանագրել մասնակիցների թւի համեմատ՝ 1734 ձայնով՝ 960 ընտրող աւելացնելով նախորդ շրջանի համեմատութեամբ, սակայն տոկոսային առումով կազմել է 1986 թ. ընտրութիւնների ընդհանուր 10438 մասնակիցների 17 տոկոսը:

2000 թականին կայացած ՊԺ-ի 12-րդ շրջանի ընտրութիւններում 2301 ընտրողներով արձանագրել է իր ռեկորդային թիւը, սակայն տոկոսային առումով կազմել է ընդհանուր 8986 մասնակիցների 26 տոկոսը միայն: 2008 թականին կայացած ՊԺ-ի 14-րդ շրջանի ընտրութիւններում թէպէտ նախորդ շրջանի համեմատ՝ 78 ընտրող պակաս էին մասնակցել ընտրութիւններին (2223 ձայն), սակայն նկատի ունենալով ընդհանուր 5174 մասնակիցների թիւը՝ տոկոսային առումով այս քաղաքամասը կազմել է ընդհանուրի 43 տոկոսը, որը ռեկորդային է համարւում 1980 թականից մինչեւ այժմ կայացած ՊԺ-ի ընտրութիւններում:

Սակայն, 2012 թականին կայացած 15-րդ շրջանի ՊԺ-ի ընտրութիւններում Զէյթուն ընտրատարածքը փոքր-ինչ նահանջ է արձանագրել նախորդ շրջանի համեմատ՝ թե՛ մասնակիցների թւի, եւ թե՛ տոկոսային առումով եւ 2004 ձայնով կազմել ընդհանուր 5555 մասնակիցների 36 տոկոսը: 1980 թականի 14 տոկոսի համեմատ՝ այս քաղաքամասը 2012 թականի ընտրութիւններում 22 տոկոսով աճ է արձանագրել մասնակից ընտրողների առումով, որը բարձր ցուցանիշ է համարւում:

դ- Սարդարապատ քաղաքամաս

Այս քաղաքամասում 1980 թականին ՊԺ-ի 10-րդ շրջանի ընտրութիւններում մասնակցել են 333 ընտրող, որոնք կազմել են ընդհանուր 5628 մասնակիցների 6 տոկոսը: 1986 թ. ՊԺ-ի ընտրութիւններում արձանագրել է այս քաղաքամասի ընտրողների ամենաբարձր թիւը՝ 536 ձայնով, սակայն տոկոսային առումով կազմել է ընդհանուր 10438 մասնակիցների 5 տոկոսը միայն: 2000 թականին կայացած ՊԺ-ի 12-րդ շրջանի

ընտրութիւններում այս քաղաքամասում մասնակիցների թիւը նւագելով՝ հասել է 466 ձայնի, սակայն տոկոսային առումով մնացել է նախորդ շրջանի 5 տոկոսը՝ ընդհանուր 8986 մասնակիցների համեմատ: ՊԺ-ի 14-րդ շրջանի ընտրութիւններում, որոնք կայացան 2008 թականին, թէպէտ թային առումով կտրուկ նւագել է մասնակիցների թիւը՝ հասնելով 219 ձայնի, սակայն տոկոսային առումով այն կազմել է ընդհանուր 5174 մասնակիցների 4 տոկոսը:

Մասնակիցների այս նւագումը շարունակել է նաեւ 2012 թականի ՊԺ-ի 15-րդ շրջանի ընտրութիւններում՝ հասնելով 157 ձայնի, որը տոկոսային առումով կազմել է ընդհանուր 5555 մասնակիցների 3 տոկոսը: 1980 թականի համեմատ՝ այս քաղաքամասը թե՛ մասնակիցների, եւ թե՛ տոկոսային առումով նահանջ է արձանագրել շուրջ 50 տոկոսով:

Ս. Աստուծածին եկեղեցու շրջան

Այս ընտրական շրջանը 1980 թ. ՊԺ-ի 10-րդ շրջանի ընտրութիւններում 605 ձայնով կազմել է ընդհանուր 5628 մասնակիցների 11 տոկոսը: Իսկ 1986 թականի մասնակիցների առումով գրանցել է ամենաբարձր թիւը՝ իր ընտրաշրջանի համար՝ 1086 ձայնով, որը կազմել է ընդհանուր 10438 մասնակիցների 10 տոկոսը մէկ տոկոսով նւագելով 1980 թականի համեմատ:

Այս թերը սաստիկ անկում են ապրել 2000 թականին կայացած ՊԺ-ի 12-րդ շրջանի ընտրութիւններում, որոնց մասնակցել են 298 ընտրող՝ կազմելով ընդհանուր 8986 մասնակիցների 3 տոկոսը միայն: 2008 թականին կայացած ՊԺ-ի 14-րդ շրջանի ընտրութիւններում այս քաղաքամասում կրկին նւագել է ընտրողների թիւը՝ հասնելով 114 ձայնի, որոնք կազմել են ընդհանուր 5174 մասնակիցների 2 տոկոսը: ՊԺ-ի 15-րդ շրջանի ընտրութիւններում փոքր-ինչ աճ է արձանագրել այս ընտրատարածքը՝ 167 ձայն մասնակիցներով, որը կազմել է ընդհանուր 5555 ընտրողների 3 տոկոսը: 1980 թականի համեմատ՝ այս քաղաքամասը սաստիկ նւագում է ունեցել թե՛ մասնակիցների, եւ թե՛ ընդհանուրի համեմատ՝ տոկոսային առումով:

Աղիակակ Բ			
Թական	Խորհրդարանի ընտր. մասնակիցների թիւը	ՊԺ-ի ընտրութիւնների մասնակիցների թիւը	ՊԺ-ի տոկոսային համեմատութիւն խորհրդ. ընտր. նեւ
1980	18276	5628	31%
1986	1984=27809 միջինը =22854 1988=17900	10438	46%
2000	22100	8986	41%
2004	12500	4900	39%
2008	13100	5174	39%
2012	11100	5555	50%

* * *

Այժմ իմանալու համար, թե թեհրանահայությունը ինչպիսի ակտիվություն է դրսևորել ՊԺ-ի ընտրություններում՝ փորձել ենք այն համեմատել նոյն թականին կայացած խորհրդարանական ընտրությունների հետ (Տես. Բ աղյուսակ): Հարկ է նշել, որ խորհրդարանական ընտրությունների մասնակիցների թիվը հանել ենք Թեհրանին չպատկանող շրջանների թիվը: Այսպես, ուրեմն, 1980 թ. խորհրդարանական ընտրություններին (ԽԸ) մասնակցել են 18276 ընտրողներ, իսկ նոյն թականին կայացած ՊԺ-ի ընտրություններում ձայն են տվել 5628 հոգի, որը կազմում է խորհրդարանական ընտրությունների մասնակիցների 31 տոկոսը:

Յաջորդ ՊԺ-ի ընտրությունները կայացել են 1986 թականին, որոնց մասնակցել են 10438 ընտրողներ: Իսկ խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել 1984 թականին 27809 եւ 1988 թականին՝ 17900 մասնակիցներով:

Ուստի՝ 1986-ի ՊԺ-ի մասնակիցների առումով համեմատություն անցկացնելու համար՝ նկատի ենք ունեցել 1984-ի եւ 1988-ի խորհրդարանական ընտրությունների մասնակիցների միջին թիվը՝ 22854 ձայն. այն համեմատությամբ՝ 1986-ի ՊԺ-ի ընտրություններին մասնակցողները կազմել են այդ միջին թիվի 46 տոկոսը, որը 15 տոկոսով անելի է 1980 թականի համեմատ:

Հասնելով 2000 թականին՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցել են 22100 թեհրանահայեր, իսկ նոյն թականին կայացած ՊԺ-ի ընտրություններում ձայն են տվել 8986 ընտրողներ, որը կազմում է խորհրդարանական ընտրությունների 41 տոկոսը՝ 5 տոկոսով նւագելով նախորդ շրջանի համեմատ: 2004 թականին խորհրդարանական ընտրություններին մասնակցած 12500 ձայնի դիմաց նոյն թականին կայացած ՊԺ-ի ընտրություններին մասնակցել են շուրջ 4900 հոգի (այս թիվը մոտաւոր է), որը կազմում է ԽԸ-ի մասնակիցների 39 տոկոսը: Նկատելի է, որ այս շրջանում կտրուկ անկում է գրանցել ՊԺ-ի ընտրությունների մասնակիցների առումով՝ անելի քան 4000 ընտրողներով: Սակայն, տոկոսային առումով այն նւագել է ընդամենը երկու տոկոսով:

Յաջորդ խորհրդարանական ընտրությունները կայացել են 2008 թականին, որոնց մասնակցել են 13100 ընտրողներ, իսկ նոյն թականին կայացած ՊԺ-ի 14-րդ շրջանի ընտրություններում իրենց ձայնն են տվել 5174 ընտրողներ, որը կազմում է ԽԸ-ի մասնակիցների 39 տոկոսը:

Այս շրջանում նկատելի է փոքր-ինչ աճ՝ մասնակիցների առումով, սակայն տոկոսային համեմատությունը մնացել է անփոփոխ՝ նախորդ շրջանի համեմատ: Հասնելով 2012 թականին՝ ԽԸ-ին 11100 թեհրանահայեր են մասնակցել, իսկ 5555 ընտրողներ մասնակցել են նոյն թականին կայացած ՊԺ-ի 15-րդ շրջանի

ընտրություններին, որը կազմում է խորհրդարանական ընտրությունների մասնակիցների 50 տոկոսը: Այս շրջանում կրկին նկատում ենք աճ՝ թե՛ թւային, եւ թե՛ տոկոսային առումով:

Վերոյիշեալ տւեալները նկատի ունենալով՝ մասնակիցների թւի առումով 1986 թականի ՊԺ-ի ընտրությունները համարւում են ամենաբազմամարդ ընտրությունները: Միեւնոյն ժամանակ, խորհրդարանական ընտրությունների հետ համեմատելով 2012 թականի ՊԺ-ի ընտրությունները՝ ամենաբարձր տոկոսն է կազմում 1980 թականից սկսած:

* * *

2012 թ. 15-րդ շրջանի ՊԺ-ի ընտրություններ

15-րդ շրջանի ՊԺ-ի ընտրություններ 2012 թ. Թեհրանի 3 շրջանների համեմատական աղյուսակ										
Երջան	Մասնակիցների թիւ. թիւ	Տեղաւ թիւ. թեհրանի համեմատ	Պատգամաւորների թիւ	Սպասեկը թիւ. ձայներ	Տրած թիւ. ձայներ	Փոխաբերական գրած անոմներ (Վիջիւ)	Ընտրածների ձայներ		Չընտրածների ձայներ	
							Ամենաբարձր	Ամենացածր	Ամենաբարձր	Ամենացածր
Երեւոյն	1297	23.35	13	1297x13 =16861	11356	13-ից 8.75	1081	531	344	159
Մտաւոյն	1930	34.74	13	1930x13 =25090	19635	13-ից 10.17	1138	759	756	599
Չեքույն	2004	36.07	9	2004x9 =18036	14944	9-ից 7.46	1013	834	798	520

Հիմք ծառայեցնելով «Ալիք»-ի 2012 թականի 12 դեկտեմբերի համարում տպագրած Թեհրանի հայոց թեմի 15-րդ Պատգամաւորական ժողովի ընտրությունների Կենտրոնական ընտրական յանձնախմբի թիւ 17 հաղորդագրությունը, որտեղ տպագրել էին 2012 թ. նոյ. 16-ին կայացած ընտրությունների արդիւնքների մանրամասնությունները, փորձենք հասկանալ, թե Թեհրանի հիմնական երեք ընտրատարածքներում, որոնք կազմում են ընտրությունների մասնակիցների 94.16 տոկոսը, ինչպէս են քւեարկել ընտրողները:

ա- Կենտրոն ընտրատարածք

Այս ընտրատարածքում մասնակցել են 1297 ընտրողներ (23.35 տոկոս), որոնք կարող էին ընտրել 13 պատգամաւորներ՝ 23 թեկնածուների միջից, այսինքն՝ իւրաքանչիւր ընտրող քւեաթերթիկում իրաւասու էր գրել 13 անուններ: Այս ընտրատարածքում իւրաքանչիւր ընտրող իր

քւէաթերթիկում 13-ի համեմատ՝ միջին հաշուով գրել է 8.75 անուն կամ 67.35 տոկոս: Կենտրոն ընտրատարածքից ընտրված 13 պատգամաւորներից առաջին 3 հոգին յաջողել են ստանալ ձայների 50 տոկոսից ավելին: Ընտրված 13 թեկնածուները ստացել են ընդհանուր ձայների 76.49 տոկոսը, իսկ չընտրված 10 թեկնածուները ձեռք են բերել ձայների 23.51 տոկոսը: Այն, ինչ ցայտուն կերպով նկատելի է այս ընտրատարածքում, ընտրված առաջին երկու թեկնածուների ստացած ձայների մեծ տարբերությունն է յաջորդ ընտրվածների նկատմամբ, որով կարելի է ենթադրել, թէ զգալի թուով ընտրողներ միայն այս երկու թեկնածուների անուններն են գրել իրենց քւէաթերթիկներում:

Կենտրոն ընտրատարածքում առաջին ընտրվածի (1081 ձայն) եւ 13-րդ ընտրվածի (531 ձայն) ստացած ձայների տարբերությունը կազմում է 550 քւէ: Իսկ ցանկի 13-րդ ընտրվածի (531 ձայն) եւ 14-րդ չընտրված թեկնածուի (344 ձայն) ստացած քւէների տարբերությունը կազմում է 189 ձայն:

Իսկ 23 թեկնածուների ստացած ձայների հիման վրայ ցուցակի առաջին թեկնածուի ստացած (1081 ձայն) եւ 23-րդ թեկնածուի ստացած 159 ձայնի տարբերությունը կազմում է 922 ձայն: Իսկ չընտրված թեկնածուների, այսինքն՝ ցանկի 14-րդ եւ 23-րդ թեկնածուների ստացած ձայների տարբերությունը կազմում է 185 ձայն:

բ- Սասուն ընտրատարածք

Այս ընտրատարածքում մասնակցել են 1930 ընտրողներ (34.74 տոկոս), որոնք կարող էին ընտրել 13 պատգամաւորներ՝ 25 թեկնածուների միջից կամ իրաքանչիւր ընտրող իրաւասու էր իր քւէաթերթիկում գրել 13 թեկնածուների անուններ: Հրապարակւած թերի հիման վրայ ամէն մի ընտրող այս ընտրատարածքում միջին հաշուով գրել է 10.17 անուն կամ 78.23 տոկոս:



Այս ընտրատարածքում միայն առաջին ընտրվողն է յաջողել ստանալ մասնակիցների ձայների 50 տոկոսից ավելին: Ընտրված 13 թեկնածուները ստացել են ընդհ. ձայների 58 տոկոսը, իսկ չընտրված 12 թեկնածուները ձեռք են բերել ընդհ. ձայների 42 տոկոսը:


